

ՆՈՐՈՐ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

Direction du journal NOR-OR Caire

Ձեռագրերն են չեն գարձուր, ԱՐՏՕՆԱՏԻՐ Ժ. ՄԻՆՆԻԵ

Լ Ր Ա Պ Ի Ր Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Ն Ո Ւ Զ ՈՐ Ե Բ Շ Ա Ր Թ Ի Ե Ի Շ Ա Ր Ա Թ Օ Ր Ե Ր Ը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates: Գանձարի համար 50, Վեցամսեայ 30, Երկամսեայ 60, Գրական 18, Գրական 7, Գրական 4

ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼ 21/4 ՄԱՅԻՍ 1901

ՔԱՍՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 86

ՍԵՐ ԲԺԻՇԿՆԵՐԸ

«Երկու Հայ բժիշկ ունին Գահի-րէի մէջ, երկուքն ալ իրարմէ աղեկ են, օտար բժիշկներէն ալ վար չեն մնար, բայց և այնպէս մեծ ցաօք կը տեսնեմ որ տեղուս հայերը անբացատրելի ցրտութեամբ մը կը վերաբերուին զէպի մեր բժիշկները»:

Կ'ըսէր անցեալները Այվազեան Սրբազան՝ անպատկառ ծերունիի մը, որ Զատիկ առթիւ ինձի պէս շնորհաւորական այցելութիւն տալու գնացած էր Սրբազան Հօր:

Բժիշկներու վրայ դարձած էր խօսակցութիւնը, որովհետեւ այցելու ծերունին իր զվարտութեամբ կը պատմէր ըսելով որ օտար բժիշկներու խնամքը յանձնելէ շատ ժամանակ վերջը, միտքը ինկած էր երթալ անգամ մ'ալ Հայ բժիշկին ցոյց տալ իր հիւանդը: Եւ իրօք գոհ մնացած էր:

Ճիշդ խօսակցութեան տաք ատենին՝ Հայ բժիշկներէն մին որուն վերայ քիչ առաջ այնքան յարգանք կը խօսուէր, ներս մտաւ ու բժշկի մը յատուկ պատկառանքով ողջունելէ վերջը նստաւ:

— Տր. մենք ալ բժիշկները կը բամբասենք ըսաւ Սրբազանը դանաւով բժիշկին: (Այսինքն հակառակը ըսել ուզեց):

Այնքան արագ փակուեցաւ որ առիթը չունեցայ երկու խօսքով իմ կարծիքս յայտնել, թէ ինչո՞ւ Հայերը՝ Հայ բժիշկի չեն երթար, նիւթ մը որուն վրայ ահաւաստիկ հիմակ պիտի խօսիմ:

Հայերուն՝ Հայ բժիշկի չերթալնուն պատճառը՝ ոչ ուրիշ բանի բայց եթէ համարումն չգոյութեան կը վերագրեմ ես: Հայերը Հայ բժիշկի չեն երթար որովհետեւ չունին այն համարումը ինչ որ ունին օտար բժիշկին վրայ: Եթէ միևնոյն համարումը ունենան Հայ բժիշկի մը վրայ, վստահ եղիք որ նախամեծար կը համարեն զիմեւ Հայ բժիշկին քան թէ օտարին:

Ասկից 10-15 տարի առաջ Հայ բժիշկ մը Տր. Ա. Երուսաղիմ համալսարանէն վկայական ի ձեռն իր կուգայ կը հաստատուի Եգիպտոս: Գահիւրէի

անդրանիկ հայ բժիշկը կը լլայ գործող՝ քիչ ժամանակուան մէջ բաւական համբաւ կը շինէ, և չի գտնուիր Հայ ընտանիք մը որուն բժիշկը չը կոչուի նա: Վերջապէս Տր. Ա. կը գիտնայ համարումը շահել, և պարագաներն ալ քիչ շատ օժանդակ կը լլայն իրեն: Բայց ինչ օգուտ որ ինք իր ձեռքովը կը քանդէ իր շինած ճամբան ու կը ստիպուի մինչև իսկ երկրէն քաշուիլ ու հեռանալ:

Խնդիր է թէ՛ այդ համարումը իր կարողութեանը շնորհիւ շահեցաւ թէ՛ ոչ պարագաներու օժանդակութեամբ:

Ուրեմն ինչ ընելու են մեր բժիշկները կարենալ շահելու համար այդ գարշելի համարումը որ այնքան սուղ է մեր մէջ:

Ինչ որ կ'ընեն Երուսաղիմ բժիշկները, ասոնցմէ ալ աւելի ընելու են մեր Հայ բժիշկները, որովհետեւ մեր ժողովուրդը օտարին այնքան խստապահանջ չը լլար որքան իր Հայ ազգակիցին:

Բժիշկ ես, փաստարան ես, հրապարակազիր ես, քանի որ անունդ կիրակոս է կամ Մարկոս, Հայ ժողովուրդը գիտցած եղիք որ քեզմէ շատ մը բաներ կը պահանջէ, առանց իր պարտքը ճանչնալու:

Չէ մի որ փոխադարձ հիման վրայ հիմնուած է իրաւունքի և պարտքի սկզբունքը, ատիկայ հասկնալու չափ փափկանկատ չէ ան:

Միջոցեւ անդին Բուրդի մը և կամ Պուշանդի մը ամենամեծ դիւրութեամբ կը շահի հայուն համարումը:

Պուշանդին քալուածքին, նստուածքին, ճիւղակուսիկին և ոչ մէկ բանին դիտողութիւն կրնայ ընել Հայը, մեզք կը համարէ նա, պարզապէս աչուրները կը կուրծն Պուշանդի մը հազարամեկ թերութիւններուն առջև:

Բարեբաղդաբար չեն պակսիր Հայեր ալ որ առանց արուեստէն ըլլալու, գիտնան կշռել Պուշանդի մը կարողութեան չափը, ու կիրակոսէ մը տարբերութիւնը:

Փորձառութիւնը ցոյց տուած է մեզ թէ՛ ժողովուրդին վստահութիւն ներշնչող բժիշկները եղած են աւելի ու

նոնք որ ապրած են հետեւալ պայմաններու տակ:

Ահաւաստիկ այդ պայմանները:

(1) Բժիշկ մը կարելի եղածին չափ շատ հիւանդ դարձանելու է: Անոր համար եթէ բժիշկը նորեկ է և հասած միջավայրին մէջ ծանօթներ ալ չունի, պարտաւոր է ձրի խորհրդակցութիւններու համար օր որոշել:

Բժիշկ մը որքան կարող ըլլայ, և որքան ճիւղակուսիկի ընդունակութիւն ունենայ, եթէ չի մշակէ իր արտը կրնայ կորսնցել անոր կորովը: Ինչպէս երկաթը որ կրնայ ժանդոտիլ չի գործածուելով:

(2) Գրական և գիտական կաճակներու մասնակցելու է: Բան մը որ մարդու բարոյական մակարդակը կը վստահեցնէ:

(3) Լաւ է դեղարան և կամ գլխաւոր յաճախել, շատ քիչ անգամ պատ մը և կամ սրճարան, աւելի լաւ է այս տեղուանքը երբեք չերկնալ:

(4) Բժիշկի մը ամուսնացած ըլլալը նամանաւանդ մեր մէջ աւելի վստահութիւն կը ներշնչէ:

Ամուսնացեալ բժիշկ մը աւելի խղճամիտ կը լլայ քան թէ ամուրի բժիշկ մը և նուազ ցանկութեան հակամիտ:

Բժիշկներն ալ հիմակ իրաւունք ունին առարկելու թէ ինչպէս ամուսնանան, քանի որ իրենց՝ կինը չը պիտի ըլլայ օր մը որ հանգիստ ընէ: Այսօր ճաշի ատեն, վաղը պտոյտի ատեն, միւս օր միւս կէս գիշերուն քունի ատեն հիւանդ մը կուգայ կը խէ բժիշկը իր կնոջ ծոցէն, և ահա կինը զրկուած շարունակ իր ամուսինէն:

Ահա այս պայմաններուն տակ ընթացող բժիշկի մը վստահ եղիք որ բաղդը չի զլանար ժպտելու, և այս գաղափարը՝ ընդհանուրին ալ գաղաբարն է: Ուրիշ խնդիր թէ երբեմն կրնայ ըլլալ որ պարագաները զսանձ օժանդակելէ:

Ուրեմն չեմ կրնար վստահիլ բժիշկի մը որ օրական տասն և ութը ժամ կը քնանայ, բժիշկի մը որ օրուան մեծագոյն մասը կանցունէ սըր ճարտններու մէջ նարո և կամ պէզիկ խաղալով:

Այս դիտողութիւնները կարծեմ զիս չեն կրնար դատապարտել, եթէ պատահի օր մը որ փողոցը և կամ տունը ու է արկածի մը և կամ վայրկեանական տահապի մը առթիւ յանձնուիմ, առ ՚ի չգոյէ լաւագոյնին, այս կարգի բժիշկներուն խնամքը:

Արդար դիտողութիւն մը ևս. ցորչափ հանրութեան օգտակար չըլլան մեր բժիշկները, ցորչափ ժողովուրդը չի կրնայ օգտուիլ անոնց պաշարէն, ասոնք որքան կարող, որքան համբաւաւոր ըլլան, դարձեալ ճշմարիտ բժիշկներ չեն:

Յաւանիկայ շարաթի թուով պիտի խօսիմ թէ ինչու մեր բժիշկներ հանրութեան օգտակար չեն ըլլար:

ՉԵՂԾՈՒՄ

Ասկից երեք ամիս առաջ էր, կարգ մը նորեկներ հրապարակի թոյտուութենէն չի փախած ըլլալ: Չհայեաց ակնածանքի՝ հովեր կառնէին մամուլին տիրելու, գրական հրապարակին իշխելու: Չէինք կրնար խղճահարութիւնը մէկդի թողուլ ու անտարբեր գտնուիլ այնպիսի կացութեան մը վրայ որ այնքան աւերիչ դարձած էր մեր ցուցամուլ գըրոններու ապագային:

«Գրական Հրապարակ»ը վերնագրին տակ իբր խմբագրական հրատարակուած յօդուածի մը մէջ ըզգացնել տուած էինք մեր գրողներուն՝ թէ մեզք էր այն ժամանակից զոր այնքան անմտօրէն կը վստահէին, մեզք էր այն մտաւորական ոյժին զոր այնքան յուսմանքս կը սպառէին, հրապարակ նետելու համար յօդուած մը, որուն վրայ հրապարակին ծիծաղը շարժելէ զատ ուրիշ փոխարինութիւն մ'ալ չի պիտի կրնային ստանալ: Արդէն այսպիսիներու ու է փոխարինութիւն ակնկալելը խենդութենէ զատ ուրիշ բանի չեմ կրնար վերագրել:

Այսպիսի ողորմելիներ միայն իրենց ժամանակը չէ որ կը սպաննեն, ատոր հետ մեկտեղ կը սպաննեն նաև իրենց բոլոր մտաւորական ոյժը, եթէ ունին քիչ մը: Ասանկներուն ուզեղը,

միտքը, ձեռուրները վերջապէս մը- տաւորական ու մարմնաւորական բու- լոր գործարանները կ'աշխատին ու կը գործեն, խնդր հաճոյքի մը հա- մար Աւելի յարգի են այն մարդիկ որ օրն ի օրն ձեռուրներն ձեռուրներն վրայ դրած՝ բերանաբաց ժամանակ- նին պարապը կանցունեն, քան թէ անոնք որ կը տանջեն վայրապար ի- բնաց ուղեղը ու մարմնոյն բոլոր գոր- ծարանները:

Առաջինները եթէ մէկ մեղք մը կը գործեն իրենց ժամանակը զուր տե- ղը վատնած ըլլալուն, վերջինները կը կրնան մեղք կը գործեն թէ ժամանակ- նին 'ի վուր վատնած և թէ իրենց մտաւոր ու մարմնաւոր կարողութիւն- ներնին չարաչար գործածած ըլ- լալուն:

Իրաւ է թէ Գրասէր-Արտոմ մ'ալ իր ուղեղը և թոքերը մաշեցուցած է, բայց գոնէ անոր ուղեղը ու գործա- բանները կրնան յաւիտեանս պարծե- նալ որ իրենց տիրոջը կրցած են ծառա- յութիւն մը մատուցանել, փիլիսո- փայի և կամ գրագէտի մը համբաւը ստուած ըլլալով անոր, մինչդեռ մեր ողորմելիներու ուղեղները կը տառա- պին կը հիւժիւն, ու փոխանակ իրենց տիրոջը զրազէտի, հրապարակագրի- փիլիսոփայի համբաւը չի կրնար ընդ- հակառակը իմաստակի և կամ խն- դի մը համբաւը կը նմային:

Աստուր ատով ալ թող գոհ մնան, որովհետեւ խնդր մակդիրով մկրտուի- լն ալ դիւրին գործ չէ...:

Չիմացաք, վերջերս երիտասարդ մը փառք կ'ուտար Աստուծոյ որ տարի ու կէս աշխատելէ վերջը հազիւ հազ կրցած էր ինքզինքը խնդր հըռ- չակել, և հանդիպողին պարծենալով կը պատմէր իր յաջողութիւնը:

«Եղբայր, տարի ու կէս ամբողջ գիշեր ցորեկ քուն չի բնացայ աշխա- տեցայ որ ինքզինքս խնդր հըռչակեմ, հեյէ շիւքեր» ի պարզ խօսքերով:

Վերջապէս չերկարենք, այս անգոր ուղեղները իրենց կրած դառն կորուս- տէն ապաշայած կը բողբոքեն ու զարմանք կը յայտնեն թէ ինչո՞ւ հրապարակը իրենց հանդէպ ապերախտ կը գրա- նուի, թէ ինչո՞ւ հրապարակը չի փա- ռաբաներ իրենց յօդուածները ինչ- պէս կը փառաբանէ Արտոմինը, Գա- րագանանինը:

Այդ զարմանքը իրենց ապուշու- թեանը կը վերագրեմ:

Որովհետեւ իրենց ուղեղը կը մաշե- ցնեն այնպիսի ճիւղի մը մէջ որ բնական ձգտում կը պահանջէ:

Մարդս կրնայ բժիշկ փաստաբան և կամ երկրաչափ ըլլալ առանց այդ արուեստներուն ձգտում ունենալու, բայց երբեք չի կրնար ըլլալ գրագէտ, հրապարակագիր և կամ բանաստեղծ եթէ բնական ձգտում չունի:

«Արեւելք» ի խմբագրութեան կողմէն Հայաստանցի երիտասարդներու հաս- ցէին ուղեղեալ խմբագրականի մը մէջ սա պէս ըսուած էր վերջերս:

«Նոր սերունդին պատկանող այն տղաքը որ այնչափ փութկոտ ծագում մը ցոյց կուտան դէպի զրականու-

թիւնը, և որոնց մէջ չի կայ գոնէ հաս մը որ ապագայ գրոց մը ըլլալու նշանները ցոյց տայ իր որ և է մէկ գրութեան մէջ: Ամեն անգամ որ այդ գրութեան հաս մը կը կուր ձեռուրներն կ'անցնեն, սովորականէն աւելի ուշադրութեամբ կը կարդանք զանոնք ու բնաւ չենք գտներ բըռ- նուելիք կողմ մը՝ որ գրողին ապա- գայ նկատմամբ լաւ գուշակութիւն մը ընել տայ մեզ:»

Շատ իրաւացի կը գտնենք սոյն գիտողութիւնները, և կրնանք ըսել թէ ո՞վ դիտէ այդ խեղճ ու կրակ յօդ- ուածները գրելու համար՝ որքան փա- մեր սպառած և ուղեղ մաշեցու- ցած են գրողները, առանց օգուտ մը քաղելու և կամ արտադրելու:

Ինչպէս են մեր ակնարկած ողորմե- լիները որ երբեմն գիշերները կը լուս- ցնեն, մոմ մոմի վրայ կը վառեն, ա- ռաւուտեան Արշաղոյսին... տպագրու- թեան յանձնելու համար իրենցմէ պարզ յորջորջուած խնդր ու խելար խօսքեր:

ԱՐԴԻ ՆՁԱՆԱԽՍՈՒԹԻՒՆԸ

(Շար. մախորդ թիւէն և վերջ)

Երբ երկու երիտասարդ անձեր փոխա- դարձ իրարու կը խոստանան ամուսնութիւն, և բացորոշ խոստմամբ իրարու խօսք կու- տան, ցիւանս միացած չեն ըլլար, և եթէ նշանախօսութեան միջոցին անոնցմէ մէկը կենդի, անոնցմէ մին այրի չի մնալ, ինչ- պէս որ որ և է ժողովրդական իրաւունք չի ստանար: Ուրեմն ինչու են նշանախօսութիւնը: Թէպէտ և զարաւոր սովորութիւն մըն է որ, աւելի կամ պակաս խաթարեալ, հասած է մինչև մեզի, ճշմարտութեան միայն մէկ մասը վաւերացնել է. վասն զի, եթէ նշա- նախօսութիւնը իրեն հնութիւնը միայն ու- նենար իրեն թեր, անհետացած ըլլալու էր մինչև հիմայ հարկաւոր արդի ժողովրդոց մէջ, որ յարգ չեն ընծայի բնաւ վաղմի աւանդութեանց:

Երբ այդ կը կարծէ գտած ըլլալ այն կի- նը որուն հետ կը բաղձայ կցել իր ճակա- տագիրը, և երբ իր գիտաւորութիւնը կը յայտնէ ծնողաց որ կը հաճին աղջկան հա- մակամութեամբ, բնական է որ կ'ուզէ աւելի մտնելու ուսումնասիրել իր ապանի կենակե- ցի: Այս այս սովորականէն աւելի փութա- ջան հանապազողութիւն մը հարկաւոր է, և քիչ մը աւելի մտնելութիւն և աւելի ընտա- նութիւն պէտք է որ տիրեն իրենց յարաբե- րութեանց մէջ, բաներ որոնց չեն հան- դուրժիք բնաւ իրենց պատուոյն և համարման հոգածու ծնողք: Եւ ահա ճշդիւ նշանախօ- սութիւնը եղած է, այդ գիտաւորութիւնները բաճնալու համար, տանը մուտքը աւելի դիւրին յարգարել և այսպէս թող տալ որ խօսեցեալները կատարելապէս դիւրար ծանչ- նան: Ուստի բնական է որ պէտք է շնորհել այդ բանը զոր պիտի կոչեմ խորհրդածու- թեան ժամանակամիջոց, որուն միջոցին եր- կուքէն մէկը կրնայ խօսքը ետ առնել մա- նաւանդ քան թէ կազմել միութիւն մը որ, իր լծուկցին և հետեանօք ընկերութեան զրժ- բազողութեան պատճառ պիտի ըլլայ:

Եթէ այս կանխագրուշուութիւնը չըլլայ, դժբախտ ամուսնութեանց թիւը այժմ եղա- ծին կրկինը կ'ըլլայ: Ըստ նրբանուլ քաղաքակրթութեան, և

բան՝ որ հետզհետէ աւելի կը վարժուի մարդ փոխադարձ հաճութիւնը որեւէ ազատ միու- թեան մը նախնական տարրը նկատել, բոլոր ազգաց քաղաքային և կրօնական օրէնքները ամուսնութեան կարգը խել մի հանդիսաւո- րութիւններով շրջապատած են՝ անոր բա- ցարձակ ապահովութիւնը երաշխաւորելու համար: Այսպիսի գործի մը մէջ, հասկըց- ուած է որ որեւէ բնագրութեամբ, որչափ և թեթիւ ըլլայ, պէտք է որ բոլորովին վտար- ուի, և օրէնքը ամենին չէ ուզած մեղսակից ըլլալ բնագրութեան՝ թիկունք և պարտաւո- րիչ ոյժ տալով ամուսնութեան խոստում մը:

Նշանախօսութիւնը սկզբումբ պէտք չէ երբեք որեւէ պարտաւորութիւն մը յառաջ բերէ: Ամուսնութեան ազատութեան կաշ- կանդում մը պիտի ըլլար այդ: Մինչև վե- ջին վայրկեանը խօսեցեալները պէտք է որ կարենան իրենց խոստումը ետ առնել. ասի իրաւունք մըն է զոր անոնց մերժել կա- րելի չէ:

Այդ եթէ նշանախօսութեան մը խզման ընծայեալ այնպիսի հետեանքներ որ անոր բնական նպատակին հակառակ են, ակնհեր և որ խօսքը ետ առնելու ազատութիւնը կաշ- կանդած կ'ըլլանք և քիչ քիչ նշանախօսու- թիւնը բուն ամուսնութեան կը փոխենք: Վտանգ մըն է այդ որմէ պէտք է զգուշանալ: Ընկերութիւնը պարտի արդիւնք զինչ այդ օրինակ խոստմանց՝ իրեն հակառակ հան- րային բարոյականի:

Ի զու յառաջ կը բերեն արգարութեան պատճառ մը որ ներշնչած է մի քանի օրե- նագրութիւններ: Ներքի չէ, կ'ըսեն, ա- ռանց պատճառի թողուլ այլ՜ի մը երկար ատեն զայն ամուսնութեան յաջող որորելն վերջը: Ասոր կը պատասխանեմ թէ խօսեց- եալներուն յարաբերութիւնները ծնողաց և շահակիցներուն կամքին համեմատ հանգա- մանը մը կ'ունենան: Եթէ ասոնք, զրամա- կան ստիպման մը խաթարեալ ապահով- ութեան վրայ վստահելով, պարկեշտութեան սահմանը անցնող ընտանութիւն մը կը թողարկեն, յանցանքին մեծը իրենցն է: Առէք անոնց ձեռքէն, որոց պարկեշտութի- նը զրամական բնագրութեամբ մը պաշտպան- ուած է, այդ պատիւր ապահովութիւնը, և ահա ամուսնութիւնը բարոյականի մասին շահա- տը կ'ըլլան:

Այնպէս փափուկ խնդիր մ'է այս, որ խզման շարժառիթներուն վրայ վիճարանու- թիւն մը անգամ պէտք չէ որ ներքի ըլլայ: Եթէ իբր կանոն հաստատուի որ ոչ ոք կրնայ իր նշանախօսութիւնը խզել առանց օրինաւոր պատճառի, անընդունելի հե- տեանք մը տեղի պիտի ունենար: Կամ այն է որ երիտասարդը իր նշանածը թողելու լուրջ պատճառներ ունի, և այն ատեն աղ- ջիկը վերադառնել պիտի ըլլար երիտասարդը զանոնք մէջ տեղ հանկուտ ստիպելը, կամ այն է որ չունի, և այս պարագային տղ' ան- կարելի չէ որ, աղաւթելու համար իրեն ըս- պանագող տուգանքէն, պատճառներ հը- նարէ: Բայց պիտի ըսուի որ պէտք կ'ըլլայ ապացուցանել հնարուած կեղծ պատճառնե- րը: Այո, այն ատեն ալ ընդունութեան մը ձեռնարկելու անպատեհութիւնը կուզայ, բան մը որմէ նոյն իսկ նշանախօսի խզման ա- լելի գզուշանալու է:

Կը մնայ ցոյց տալ վերջին վտանգ մը, եթէ թող տրուի որ այսպիսի վիճեր գատա- րանաց առջև տարուին, նշանախօսութեան փափկութիւնը և ամբողջութիւնը բարոյա, կանոնութեան վստաբեր հարուած մը պիտի ընդունէին ատով: Կան այնպիսի բաներ որ, որեւէ պատճառաւ, պէտ չէ որ հրապարակ հանուին գատարանի առջև: Ատով կը կոր- անցունեն այն չդիտեմ ինչ ամբողջած բանը

որ անոնց կուտանը կը կացուցանէ և որմէ ինչոր ալ ըլլայ՝ պէտք չէ զրկել զանոնք: Նոյն բանը կը մնայ միթէ, եթէ գատարա- նաց առջև թողունք որ ելլեն նշանախօսու- թեան խզման բոլոր խնդիրները: Խօսեցեալ- ներուն յարաբերութիւնները բաւական զրժ- ուար պիտի ըլլար որակելը, անոնք կարծես թէ քիչ շատ անպատկառ պիտի ըլլային, որովհետեւ զրամով պիտի գնահատուէին, և երիտասարդը՝ աւելի կամ պակաս խորհրդա- դաճ ըլլալուն համար՝ աւելի կամ պակաս մեծ զրամական գատապարտութիւն մը կը- րելու պիտի նկատուի:

Ու պիտի երթան գատաւորներուն առջև կէտ առ կէտ մանրամասնօրէն վիճին այս ինչ կամ այն ինչ գործքին բնութեան, հանգա- մանքին, տեղութեանը, նշանախօսութեանը վրայ, պիտի այս ըսեն ոչ ըսեն, և ամեն բան գնահատման խնդիր մը պիտի դառնայ: Որուն գնահատումը սակայն, կ'աղաչեմ՝ Պէտք է գտնել գատաւորներ որ յայտարարեն թէ կրնան կամ կ'ուզեն գնահատող ըլլալ զիւստօրէն զարգացի գործերու կամ նշա- նածներուն յարաբերութեանց:

Արգարութիւնը շատ այլանդակ պիտի երևի, եթէ իբրեւ երրորդ մը կամ վկայ մը պարտաւորուէր հանդիսատես ըլլալ նշա- նածներուն յարաբերութեանց, անոնց մտեր- մութեան աստիճանը գնահատել, և անոնց արտազեղմանց չտար քննել: Արդէն այժմեան ապահարզանի գատաւորութեան համար մեծ գիտաւորութիւն կը կրուի, պէտք չէ որ աւելի կ'ընտանեք զայն՝ նշանախօսութեան ետ առ- նուելուն պարագային՝ պատասխանատուու- թեան ալ աւելի գիտաբաններին սկզբունքը ընդունելով:

Չարդիս ամուսնութիւնը մեծ հակամիտու- թիւն մը ունի շահախնդրական գործ մը գառնալու: Ընչաքաղձութեամբ լի մեր ծա- մանակը կ'ընէ կը փնտռէ միայն իր օժիտ, իր զրամագրուի, կամ՝ այդ մարդուն հա- մար՝ յաջողելու միջոց մը, և կ'ընէ համար՝ ապաւին մը որուն մէջ պէտք է մտնել: Արդի ամուսնութեան այդ նողկալի նկարագրին դէմ պէտք է որ ընկերութիւնը մաքաւի:

Իբր թէ բաւական չէր որ ընչաքաղցու- թիւնը, ամենին յարգելի զգացումները խա- զայիկ ընելով, ամուսնութեան հաստատու- թեան մէջ նիւթական շահը կը փնտռէ, պէտք է որ օրէնքը վաւերացնուի ելլայ գոր- ծը մը զոր կը մերժէ հանրային բարոյակա- նութիւնը:

Ո՞րչափ կը հեռանանք այն ճշմարիտ գա- ղափառն զոր պէտ է ունենայ մարդ այդ մարդուն միութեան վրայ այն էակին հետ՝ որ տանը ուրախութեանց և ձախողութեանց ընկերը պիտի ըլլայ:

ԹԱՐԳՄ: Յ. ՍԷԹԵԱՆ Խ. ՉՈՂՐԱՊ

ԾԵՅԻ ԷԹՄԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Գահիրէ 2 Ապրիլ (Ն. Տ.)

Առաջինայ թուով մեր խորհրդակցութիւն- ները պիտի ընենք հետեալ թղթակցու- թեան առթիւ՝ որ Պոլսական թերթերու մէջ ալ տպուած է:

Ստոյգ է որ վարժարանի վերաբերեալ կարուածի մը երկամսյա (1899 Սեպտ. 10 -1904 Սեպտ. 9) վարձատուութեան առ- թիւ գատ ծագած է վարձակալին ու Առաջ- նորդարանին միջև. վասն զի վարձակալը, փոխանակ երկուստեք կանխաւ զոյցած հա- մաձայնութեան համեմատ՝ Ելիս Էթմանի Էթմանի կարուանութիւնը նախորդ վար- ձակալէն կազմուած ցուցակին հետ բաղա-

տելու և արդիւնքը Առաջնորդարանին հա-
ղորդելու՝ պէտք եղածը սնորհներու հա-
մար՝ ամիսներով լրած ու յետոյ 1900
Մարտի 3ին բնիկ դատարանին առջև դատ
բացած է Առաջնորդարանի դէմ, պահանջե-
լով վնասի հատուցում, գլխաւորաբար «ար-
մատներու գէշ հոտուելուն» և երկրորդա-
բար «անոնց մէջ պակասներ գտնուելուն»
պատճառաւ:

Վարչութեան Գաղափարական Ժողովը, որ
մեր նախագահութեան տակ կ'զուսմարուէր
այն ատեն, անմիջապէս խնդիրն օրէնսդէտ-
ներու ուղարկութեան ներկայացուցած ու
անոնց կարծիքին համեմատ, նկատելով թէ
նոր վարձակալին ըսածին նայելով եթէ վը-
նասին հեղինակը նախորդ օՏԱՐԱՆԱԿԱ-
ՏԱԿ վարձակալն է, բնիկ դատարանէ ար-
ձակուելիք զձեռն մը չի կրնար այս վերջնոյն
զէմ գործարարիլ, հետևաբար, խառն դա-
տարանի ստիպողական գործոց դատարանին
առջև՝ Առաջնորդարանի վարձակալ մնայուն
փաստարանին ձեռքով դատ բացած է 1900
Մարտ 14ին հին և նոր վարձակալներուն
զէմ միանգամայն, քանի որ վնասին, եթէ
իրօք գոյութիւն ունի, հեղինակն ու պա-
տասխանատուն մէկը կամ միւսն է անպատ-
ճառ, և քանի որ ըստ սովորութեան, որուն
Առաջնորդարանը կ'էջտեմի, իրեն առաջին
կալուածն ունենալէն ի վեր, էպատեմն իր
պարունակութեամբ հին վարձակալէն նորին
փոխանցուած է ուղղակի: Յիշուող դատա-
ւորն ընդունեց թէ այս դատը պէտք է նախ
Խառն դատարանի կողմէ վճռուի և
մերժեց նոր վարձակալին պահանջը, որով
կ'ուզէր այս դատէն դուրս ձգուիլ: Ուրեմն,
նոյն դատարանի 22 Մարտ 1900 թուա-
կան վճռագրին համաձայն, նոր վարձակալը
դատին մէջ մնաց, և մասնագէտ մը կարգուե-
ցաւ այս գործին ջննութեան, որուն անմի-
ջապէս ձեռնարկուեցաւ: Այս պարագանե-
րուն առջև աւելորդ դատուեցաւ օրէնսդէ-
տաց կողմէ որ Առաջնորդարանն առժամայն
խնդիրները պաշտպանէ բնիկ նախնական դա-
տարանին առջև, մինչև իսկ ներկայ գտնուի
հոն, յուսալով որ մինչև այն ատեն Խառն
դատարանն այս խնդրին ստուգութիւնն հա-
տատած կ'ըլլայ ջննութեամբ:

Բնիկ դատարանն հետևաբար հիմնուելով
իր կողմէ Առաջնորդարանի քացակա-
լութեան կատարել արուած ջննութեան
մը տեղեկագրին վրայ, 1900 Յունիս 2ին
դատապարտեց Առաջնորդարանը նոր վար-
ձակալին պահանջած իր 640 եղպ. ոսկոյ
գումարը վճարելու, հիմ ընկելով իրաքան-
չիւր ծառի համար 13 դրշ. ողջ վնաս, իբր
հետևանք գէշ հոտուելուն ևն: Առաջնորդա-
րանն այս վճիռն օրոգիւսիսի առակայ ը-
րաւ: Յունիս 30ին միևնոյն, այսինքն բնիկ
դատարանին առջև, պահանջելով որ դատա-
րանն ուղարկուի զարձնէ ինչ ինչ կարեւ-
որ նկատուեցողութիւն վրայ, մերժե վարձակա-
լին պահանջն իբրև անիրաւ, կամ զոնէ յե-
պաձգէ անոր ջննութիւնը, մինչև որ Խառն
Դատարանն իր վճիռն արտասանէ, Առաջ-
նորդարանին կողմէ միևնոյն նիւթին համար
յիշեալ վարձակալին և անոր նախորդին զէմ
բացուած դատին մէջ: Բնիկ նախնական դա-
տարանը սակայն դիտողութիւն բնկելով թէ
նոր վարձակալն ուղղակի Առաջնորդարանէն
վարձած է կալուածը, 17 Նոյմ. 1900ին
վերահաստատեց իր արդէն տուած վճիռը, սր
Առաջնորդարանին կողմէ բնիկ վերաքննիչ
դատարանին առջև հանուեցաւ, և մեծ յոյս
կայ թէ այս բնիկ դատարանը գոհացում
տայ Առաջնորդարանի պահանջումին, երբ
ամսոյս 24ին զբաղի այս դատով:

Խառն Դատարանի ստիպողական գործոց
դատարանին կողմէ կարգուած ջննիչին գործը
թէ և պահ մը ընդհատուեցաւ ջննիչին ծա-
նր ու երկարատև հիւանդութեան պատճառաւ:

բայց ուր ուրեմն աւարտեցաւ այս օրերս, և
անցեալ ամսոյ 26ին (Ն. Տ.) տեղեկագրուե-
ցաւ նոյն դատարանին և ի մտոյ Խառն Դա-
տարանի ուղարկութեան պիտի մատուցուի:
Նոյն տեղեկագրին կը տեսնուի թէ ջննու-
թիւնը կատարուած է տեղւոյն վրայ և շատ
մանրակրկիտ կերպով, թէ նոր վարձակալը
ներկայաւարով ջննիչին՝ ամէն ջանք ի գործ
դրած է ինքզինքն արդարացնելու համար, թէ
արմատները գէշ և շատ տարիներ պտուղ
չտարու կերպով հոտուած ըլլալու ամբաս-
տանութիւնն անհիմն է և արմատները նոր
վարձակալին պայմանագրին մէջ նշանակ-
ուած թիւէն, այսինքն 4780 Էն 285 հատ
պակաս են, որուն 235ին պատասխանա-
տուութիւնը կ'մանրանայ հին վարձակալին
վրայ և անցեալ 50 հատինը կարելի եղած
չէ իրեն ճշդիլ թէ որո՞ւ կ'պատկանի, նոր
վարձակալին թէ հինին: Արդ, ենթադրելով
որ այս 50ին համար նոր վարձակալին պա-
տասխանատուութիւնը չհաստատուի, են-
թադրելով որ պակաս 285 ծառն բերքին
համար նոր վարձակալն Առաջնորդարանն
տուգանք առնելու իրաւունք ունենայ, ծառ
զուրկ 13 դրուշի հաշուով իսկ, չի կրնար
աւելի ըլլալ քան 3705, և ոչ թէ ասոր գը-
րեթէ քան պատիկ գումար մը 64000 դրուշ:
Կ'աւելցնենք նաև որ սխալ է թէ բնիկ
դատարանի ջննիչներու իբրի վարձք 200
ոսկի սահմանուած է. այլ այդ գումարն
ճիշդ տասն անգամ նոսաղ:

Կար և յաջողութիւն մտղթելու ձեռք, և
ողջունելով գձեղ հայրական սիրով:
Առաջն. նախորդ Տեղապալ
Հայոց Եղիպատի
ՄԱՍՐԱԲԷ ԲԷՆ. ՂԱՐԱՆԵԱՆ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼԻՍ. — Մայիս 2ին կալաթայի
մէջ ժանտախտի դէպք մը պատու-
հած է:

ԷՆՎԷՐ ՓՈՏՈՍ. — Չինաստանի մահ-
մետականներուն հետ յարաբերու-
թեան մոտեցում համար՝ պատգամա-
ւորութիւն մը մեկնեցաւ Պոլսէն դէ-
պի 2ին:

Պատգամաւորութեան գլուխն է Էն-
վէր փաշա, որուն մասնակից են նաև
կրօնական և քաղաքական դատակալ-
քի անդամներ:

Ռուսիա հակառակեցաւ այս պատ-
գամաւորութեան ուղարկութեանը,
իսկ Գերմանիա ընդհակառակը նը-
պաստեց:

ՔիՉԷՐ. — Հայտութեան նոր պայ-
մաններ առաջարկուած են Պոլսէն բերու-
կողմէն՝ Չորափար Քիչէրին: Բայց չի
կարծուիր որ անկեղծ ըլլայ, այդ ա-
ռաջարկութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇԱՐԺՈՒՄ Ի ՉԻՆԱՍՏԱՆ
Շանկհայէն «Մօռնինկ-Բօսթ» կը
գրեն թէ՛ յառաջիկայ Մայիս ամսուն
Շանկ-Յէի նահանգներուն մէջ ընդ-
հանուր շարժում մը կը պատրաստուի:
ՉԻՆԱՍՏԱՆ ՏՈՒՂԱՆԷ

Բէքինէն «Թայմզ» կը գրեն (24
Ապրիլին) թէ՛ Չինական դէպքու առ-
թիւ եւրոպական տերութեանց պա-
հանջած տուգանքը 65 միլիոն անգլի-
ական ոսկիէն պակաս չէ: Միմիայն

ա. գ. գումարին մէջէն 16,900,000 պի-
տի յատկացուի Ռուսիոյ կրած վնաս-
ներուն: Այս տուգանքին վրայ ամէն
ամիս 100,000 ակիսն ոսկի պիտի
բարդուի:

ՊԱՐՄԻՑ ՇԱՆԸ
Պարսից Շահը թարային հիւանդու-
թեանէ կը տառապի: Արդի վիճակը
արագ բարւոքման նշան ցոյց չի տար:
ԹՈՒՐԿԻՈՑ ՍՈՒՂԱՆԷ

Չրոյց կը պըտըտի թէ՛ Թուրքիոյ
Սուլթանը ընդհանուր ներում պիտի
չնորհէ Փէժօն-Թուրքերուն:

ՉԵՄՊԸՐԼԻՆ
«Տէլլի-Մէլլ» կը գրեն թէ՛ Պ. Չէ-
պրլին պիտի լինի վերաբերեալ խնդր-
ներու առթիւ ինչինչ առաջարկութիւն-
ներ ըրած ու իր հակառակորդներու
կողմէն մեծ դիմագրութիւն տեսած է,
նամանաւանդ ամուսին վրայ դրուած
տուրքին առթիւ:

Վարչութիւն

Նոր-Յոր օգտաշատ թերթի:
Աստ
Մեր անկեղծ զգացումներուն
թարգման հետեւեալ շնորհակալեաց
գիրք, կը խնդրենք, եթէ կարելի է
հիւնկալել հաճիք պատուական թեր-
թիդ մէկ անկիւնը:
Մնամ յարգանք
Վահրամ Գրիգորեան
Գահիրէ 2 Մայիս.
1901

ՇԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ստորագրեալ ամենարդար պարտակա-
նութիւն կը համարի, ներկայիս 'ի դիմաց
Սիկարէթի Համազգային Գործաւորական
Ընկերութեան մասնակցող Հայ գործաւո-
րաց, հրապարակու անձուն շնորհակալու-
թիւն յայտնել, Տիար Շաւարշ Շիշմանեանի
որ մեր դիմումին պատասխանելով հաճեցաւ
Մայիս (1)ին տեղի ունեցած հանդէսին մէջ
հայերու կողմէ ճառ մը արտասանել, այն-
չափ պերճախօս, որչափ յուղիչ, խելով
զանազան ազգայնութեանց խառն բազմու-
թեան մը «պառօյնները և ծափահարու-
թիւնները»:

Այս պատուաբեր առթիւ սերսի եմ ա-
ւելցնելու թէ՛ այն հիյացումի տպաւորու-
թիւնը որ զբոյժուած կը մնայ բոլոր քեր-
կայ դանուող օտարազգիներուն և մեր վը-
րայ, սիրելի կրնայ մեզ պահել միշտ
մեր սրտին խորը Տիար Շիշմանեանի այդ
հանդիսաւոր օրուան մէջ թողած անջնջելի
յիշատակը:

Սիկարէթի Համազգային Գործաւորական
Ընկերութեան Հայ ներկայացուցիչ:
ՎԱՀՐԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խըտիլը վերջապէս հինգ շաբ-
թի օր մեկնեցաւ Աղեքսանդրիա, ուր
պիտի անցնէ ըստ սովորութեան ա-
մառուան եղանակը:

— Իշխանուհի Շէլզ վեկ. Հօլաթէյն
որ երեք ամիսներէ ի վեր Գահիրէ կը
դառնուէր ուր եկած էր օգտափութու-
թեան համար, երեկ երեկոյ մեռաւ
Օթէլ Շէփէրտի մէջ 75 տարեկան
հասակին մէջ: Հանգուցեղոյն մարմինը

վերին Եգիպտոսի գերեզմանատունը
պիտի փոխադրուի այս երեկոյ ժամը
3ին:

«Էլ Լիվո» լրագիրը կը ծանուցա-
նէ թէ՛ Գահիրէ ընկալող Ֆրանսացի
մը, ինչպէս նաև իւր կիներ, իր զա-
ւակները երկու մանչ և մէկ աղջիկ,
մահաւտականութիւնը ընդգրկած են:
ԸՍՑ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ Եգիպտոսի
գործարաններուն մէջ պատրաստուած
կերպասեղէններու և բամպակեղէն-
ներու համար այսուհետև տուրք պի-
տի առնուի ինչ քանակութեամբ որ
կ'առնուի օտար երկիրներէն Եգիպտոս
ներմուծուող ապրանքներէն: Միմիայն
ձեռքով պատրաստուած ապրանքները
զերծ պիտի մնան այս տուրքէն:

Եթէ մէկ մէջ ապտամբութիւնը եր-
թալով ծանր կերպարանք կառնէ,
Ղրկուած զօրքերը բաւական չեն
նկատուիր: Կառավարութեան գանձը
պարագա ըլլալուն՝ Սուլթանը անկա-
րող գտնուած է զօրք զրկել: Վերջե-
լս թուրք ղինուրները փոխադրող
Օսմանցի շոգենաւ մը՝ Սուէիչի Գա-
նալի տուրքը չի կարենալ վճարելուն
օրերով ստիպուել է սպասել:

ԹՕՔԱՒԵՏԱԿՈՐԻ ՍԸ ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Մոսկիւիէն Արեւելի ուղարկուած շա-
հկան թղթակցութիւնէ մը կը քաղենք հե-
տեւեալ կտորը:

«Ես, միշտ ես և միայն ես...» ահա՛
Թոքախտաւորի մը ճշմարիտ հոգեկան վիճա-
կը: Ամէն մարդ իր պահպանման բնագոր-
ւումով առաջնորդուած՝ ենթակայ է թիչ ու
շատ եսամոլութեան. բայց առողջ մարդը
կրթութեամբ կը սանձահարէ կամ իր աշ-
խատութեամբ, կամքով և առաքնութիւննե-
րով կը ծածկէ սոյն թերութիւնը:

Թոքախտաւորին բոլ ազնիւ զգացումները
կը փճանան հիւանդութեան յատաշացման
հետ. բայց միւս կողմէ եսամոլութեան հետ
կը մշակէ նաև ուրիշ թերութիւն մը՝ նւա-
խաւանդ: Մասնաւորաբար կիները եթէ
թոքախտ վարակուին, նախանձը թոյն կը
դնէ իրենց հոգոյն մէջ: Կ'ուզէ որ զինք
չթողուն, չմոռնան. միայն պէտք է խորհիլ
իրեն վրայ միայն անոր ծառայել, ուտել և
պակիլ անոր բոլ վերջապէս հոգով և
մարմնով անոր զոհը ըլլալ:

Փորձը կը ցուցնէ թէ մէթոքական ե-
րկոյթները կ'ազդեն չափազանցօրէն թո-
քախտաւորի հոգոյն վրայ. արեգակը, իր
կենսատու ճառագայթները, տաք երկիրնե-
րու մաքուր օդը և լոյսը, կանաչազարդ դաշ-
տերը կենք կը ներշնչեն խեղճ հիւանդին,
ան՝ որ թիչ մըն ալ աւելի ապրելու համար
պատրաստ է ամեն ինչ զոհել:

Մէկ խօսքով թոքախտաւորին մնացեալ
գործարաններու ամբողջական փճացումէն
շատ առաջ հոգեկան բարձր յատկութիւն-
ները, ինչպէս բարոյականութիւն, ընտա-
նիք, սէր, բարեկամութիւն եւ այլն արդէն
գոյութիւն չունին:

Միայն, մարմնական, հոգեկան, մտա-
ւորական այդ անյերազանալի աւերակնե-
րուն մէջ գոյութիւն ունին զեռ կամքը և
յիշողութիւնը՝ որոնք հիւանդ նիւթին ամե-
նայետին պահպաններն են:

Թորախառնորները ընդհանրապես փաստում են մտաւորապէս, փաստում են նաեւ հոգեկանապէս և այդ միեւնոյններն են որ ինչպէս մտային՝ նոյնպէս հոգեկան ծայրագրգռութեան մը ենթակայ են եղած:

Հոգեկան փոփոխութիւնը կը կայանայ գլխաւորապէս նկարագրի փոփոխութեան մէջ որ տեղի կ'ունենայ ընդ ու շատ արագութեամբ: Այն երիտասարդը՝ որ ուրախ խառնուածք մը, զուարթամիտ բնութիւն մը ունէր՝ կ'ըլլայ զերբազգած, կասկածոտ, ցասկոտ: Այն կինը՝ որ հեղահամբոյր էր և արգարասէր՝ կ'ըլլայ խստաբարոյ, անիրաւ խելքին փշածը ընող: Չարմանային հոն է որ հակառակը գրեթէ բնաւ տեղի չունենար այլ միշտ հոգեկան թերութիւնները աւելի կը չափազանցուին և երբէք մեղմանար ու թեթեւանար:

Տիրութիւնը, կարծես, անբաժանելի ընկերն է թորախառնորին: Հիւանդանոցին մէջ ծիրախառնորները կը հաւաքուին լոյն, գլխիկոր և տիրազէմ և իրենց տիրութիւնը ուղիղ կերպով կը համեմատի մարմնոյն կրման հետ:

Թորախառնորներու ըզով տիրութեան հետ կը ծնի նաեւ ուրիշ երեւոյթ մը՝ նշարկանոթիւնը, կամ աւելի լաւ է ըսել անձ, նասիրութիւնը իր ծայրայեղութեան կը հասնի, ըսնի որ ամէն մարդ ընդ ու շատ անձ, նամու է: Թորախառնորը մինչև իր մազին ծայրը ետասեր է և եթէ բժշկութիւնը իրեն վիճակուած է, կեանքին մինչև վերջին վայրկեանը ետամու մը պիտի մնայ:

1901 Յունիս 1-ից Պարիզում կուսի լոյս տեսնել հայերէն լեզուով «ԺԱՄԱՆԱԿ»

Հանդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական:

ԺԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին ևւրոպական գրական հանդէսները. առանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտնական ու գեղարուեստական բաժինները վրայ:

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատրաստակարարութիւն են յայտնել բազմաթիւ հայ և ևւրոպացի յայտնի հեղինակներ, որոնց երկերը արդէն ստացել է խմբագրութիւնը:

ԺԱՄԱՆԱԿը արդարեւ կը լինի 5 տպագրական թերթերից (80 երես La Revue et Revue des Revues հանդիսի դիւրով):

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս կը տեսնի ճիշդ 1901 թուականի յունիս 1ին և ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902 թուականի Յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքանչիւր ամիս:

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը տպագրէ եւրոպական երկերի բնագիրը եւրոպական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին:

Բացում է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականներին: Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետևեալ աղիւսակի մէջ Բաժանորդագրութիւն 1901 քուականի (կիսամեակ)

Ռուսաստան 3 ուրբի. Անգղիա 7 շիլին,

Ֆրանսան, Պուլկարիա. Պարսկաստան, Ռումանիա. Թուրքիա, Եգիպտոս. Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.

Ամերիկա 1 դոլար (ոսկի) Բաժանորդագրութիւն 1902 քուականի (12 զիւրֆ)

Ռուսաստան 10 ուրբի Անգղիա 1 ֆնտ. ստերլին Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրնք.

Բաժանորդագրութիւն 1901 և 1902 քուականիներին համար (15 զիւրֆ) Ռուսիա 12 ուրբի Անգղիա 1 ֆնտ. ստերլ. և 7 շիլ.

Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրնք.

Ամերիկա 6 դոլար Ամենայն տեղերից գիմել հետևեալ հասցէով.

Paris, (France) 64 rue Claude-Bernard Directeur de la Revue « Jamanak » S. Hakhoumian

Ա Ձ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու դիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապտ-էլ-Ապիդի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը:

ՏՈՒՒԱ ՄԻԻՋԻԿԼՄԱՆ (ԻՍՒԱՄԱԿԱՆ ՕՐԵՆՍԿԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Եգիպտական արգարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ գնա-

հատուած և Եգիպտոսի դատարաններուն մէջ գործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն ժառանգական օրինաց և ժառանգութեան իրաւանց ծագման վրայ. — Ժառանգութեան պայմանները. — Ազգականութիւն և աստիճանները. — Գերութիւն և ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ժառանգութեան զրկող պատճառներ. — Մարդասպաններու ժառանգութիւնը. — Տէլէթ (մարդու արեան զինը). — Ժառանգութեան մը պարտքը և պահանջը. — Ժառանգորդներու կարգը իրենց աստիճաններովը:

Ժառանգութեան օրէնքին տրամադրութիւնները ուրոյն ուրոյն մեկնուած են: Գրքոյին վերջը դրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժինները ինչպէս կը բաժնուին:

Երկրորդ մասը մտ ժամանակէ լոյս պիտի տեսնէ՝ խնամակալութեան կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով: Գին 10 ԳՊՀ. ՈՂՂ

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԿԻՊՏՈՍԻ Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութիւնը դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբ ամենուս վատահոլութիւնը կը վայելէ: Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և

Գուէտի Ֆօնսիլէի, վիլ տը Բարբի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, զանձումներ: Սմասկան չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ասանէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւպոնի վրայ փաստաբան Ռարթաքիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ դրամ զըրկել հետևեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵԼԵԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ԱՐԱՅԵԱՆ ԳԵՐԱՎԿԵՐ ԱՐԱՅԵ ԵՒ ՏԻԿԱՆՑ ԵՒ ՁԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիքի մեծ պողոտային վրայ Տայրայի Սանիյի դիմացը, Յալսիք ելիքսական գործիներու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմուղ Պատ. յաճախորդները, գործի մարբութեան, զիններու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն:

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւադիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով, Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միլոքիւն». — Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն Մ Ի Կ Ա Հ Ի Ր Է ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.: Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճշգրտութեամբ: ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ